



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3668

82

f-51



48. 89 / 94

ԳՈՒԼՍԸՆ ՔԸՌՆԸՄ

ՄԱՆՈՒԿՆ,
ԻՄԱՍՏՈՒՆՆ
ու
ՍԱՏԱՆԱՆ

104
11

ԹԱՐԳՄԱՆԵՑ
Մ. ՄԱՍՈՒՐԵԱՆ



25

82
Գ-51

ՏՊԱԳՐ. ՄԱՍՈՒՐԵԱՆ
ԻԶՄԻՐ

ՄԱՆՈՒԿՆ. ԻՄԱՍՏՈՒՆՆ
ՈՒ
ՍԱՏԱՆԱՆ

20 OCT 200
28 JUN 200

82
8-51

ԳՈՒԼՍԵՆ ՔԸՌՆԸՄ

ՄԱՆՈՒԿՆ, ԻՄԱՍՏՈՒՆՆ
ՈՒ
ՍԱՏԱՆԱՆ

ՔԱՐԳՄԱՆԵՑ
Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ



ԻԶՄԻՐ
ՏՊԱԳՐ. ՄԱՄՈՒՐԵԱՆ
1902

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ
ԵՐԵՎԱՆ

معارف نظارت جلیله سنک ۴۰ نومرولی و ۵ ایسان
۱۳۱۷ تاریخلو و خصتیه طبع اولمشدر

5608

ՀԱՅ ԴԱՐԱՆ

ՀԱՅ ԴԱՐԱՆ

ՀԱՅ ԴԱՐԱՆ

ՀԱՅ ԴԱՐԱՆ

ՀԱՅ ԴԱՐԱՆ




ՀԱՅ ԴԱՐԱՆ

ԶՕՆ

ՄՐՏԱԿԻՑ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԵԱՆ

Ա.Ռ.

Տ. ՄԵԼՔԻՍԵՂԵԿ ԱՐՔԵՊՍ, ՄՈՒՐԱՏԵԱՆՑ




31 MAR 2014

002


ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՎԱԿԱՆ ԿՐԹԱԿՈՒՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՎԱԿԱՆ ԿՐԹԱԿՈՒՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ



58141-67

Ամենապատիւ Սրբազան Հայր,

 ԵՐ բարի ու գեղեցիկ հոգին, իբրև անասան հաւատոյ ու շուստու ինաստութեան վառարան, ունի հրապոյր մ'որ բարունջն ու գեղեցիկն անսարքերներն անգամ կը գրաւե:

Եւ ես՝ Ձեր վաղեմի բարեկամն, ես որ այդ հրապոյրը վաղուց զգացած եմ, եւ որ երբեմն կրօնական խնդիրներու հետամուտ այնքան չեմ եղած, յորդորուեցայ մեր յարաբերութեան եւ այս վերջին տարիներուս աղետալի դժբաղդութեանս բերեալք, մտնեչ այն սրբավայրն, ուր իբրեւ մխիթարութեան ու սշմարտութեան սպառնե շատեր պիտի մտնեն անշուշտ:

Ահա այդ սրբավայրեկ քաղցի իբրեւ խնկաւեհ ու խորհրդաւոր փունջ մը սոյն գրքոյկիս. որ ամեն կոնապաշտական, սոքոստիական ու արարողական սքոթիւններէ ազատ, կը պատկերէ երկնային այն հոռիւնն որ անհուն գրասիրութիւն կ'ըզրէ

ԿՐԹԱԿՈՒՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Հետեւաբար Դոմ, Մրբագան Հայր, սոյն գործոյս իբրեւ անուղղակի շարժառիթը՝ իրաւունք ունի՛ք քարգնահանութեան, ուստի քոյր տուե՛ք ինձ՝ ի յիշատակ մեր արտակից բարեկամութեան, զայն ձօնեղ Ձեզ, յուսադով որ չպիտի մերժե՛ք այդ ձօնել Ձեր Մրբագնութեան

բոնորանուէր բարեկամին:

Յունիսար 1900
Իգմիր

Մ. ՄԱՍՈՒՐԵԱՆ



Սիրելի Մամուրեան,

ԹՅՍՐԳՄԱՆ Ե ԼՈՎ մի գրքոյկ. «ՄԱՆՈՒԿՆ, ԻՄԱՍՏՈՒՆ ԵՆ ՍԱՏԱՆՈՒՅ» վերնագրով, հաճած էք զայն ձօնել ինձ՝ Ձեր վաղեմի սրտակից բարեկամին, վստահ լինելով թէ՛ չեմ մերժեր Ձեր պատուական Ձօնն:

Ինչո՞ւ մերժեմ, Սիրելի Մամուրեան, քանի որ Ձեր բարեկամական սրտին պէս, վստմասէր սրտէք թղխած է Ձեր Թարգմանութեան քնագիրն:

Ո՞վ չը գիտէ թէ Թարգմանութիւնք այն ժամանակ միայն գեղեցիկ են, երբ սրտերն ու մտքերն կը Թարգմանուին եւ ո՛չ լոկ բաւերն ու դարձուածներն:

Եւ ես Ձեր Թարգմանական հմտութեան վրայ չէ՛, որ պիտի խօսիմ, զի այն հանրածանօթ է, այլ Ձեր բարեկամական անկեղծութեան վրայ, Ձեր կրօնական ազատասիրութեան վրայ, որով շարունակ պաշտպանած էք, բանիւ եւ գրով, Հայ. Ս. Եկեղեցւոյ ինքնուրոյն գոյութեան եւ յարատեւութեան կենսական կարեւորութիւնն:

Տակաւին Ձեր խոհեմափայլ դէմքն չը տեսած՝ կը ճանաչէի արդէն Ձեր սիրտն Կովկասէն, երբ կը հրատարակուէին Ձեր յօդուածներն *Կոռնկն* ամսամերթի մէջ, յորում եւ ես ունէի իմ համեստ բաժինն՝ իբր աշակից խմբագրութեան:

Փափաջ յղացաւ այն ժամանակ սրտիս մէջ ու-

ղեկորութեան շրջան կատարել եւ տեսնել Տաճկաստանի մեր Հայ եղբայրները :

Այս միջոցին էր, որ անձամբ իսկ ծանօթացայ Չեր սիրելութեան հետ 1865 ին : **Դուք** դիւանադրպիւր էիք ի Պատրիարքարանի, իսկ ես ուսումնասիրութեան խանդով ոգեւորուած մի ուղեւոր : **Մեր** սրտերն մի էին արդէն, մեր նպատակն եւս միութեան յանգեցաւ **Ս. Էջմիածնի** Հայրապետութեան իրաւանց պաշտպանութեան տեսակէտով : Վասն զի վախճանած էր **Տ. Մատթէոս** կաթողիկոսն, եւ Հայրապետութեան ինդիրն հրատապ կերպիւ սկսուած էր յուզուիլ **Ազգ. Ժողովոյ** մէջ, որոյ ատենագրութիւններն եւս միշտ կր պատրաստուէին Չեր հմուտ դիւանադրութեամբ :

1866 ին էր կարծեմ, որ դուք հրաւիրուեցաք ի Զմիւռին վարժարանաց Տեսչութեան, իսկ ես 1867 ին ուղեւորուեցայ յԵրուսաղէմ յուխտ **Ս. Տեղեաց**, ուր **Եսայի Ս. Պատրիարքի** եւ միաբանական ուխտի յորդորանօք պարտաւորուեցայ ընդունիլ **Ժառանգաւորաց** վարժարանի տնօրէն տեսչի պաշտօնն :

Հեռի էինք իրարմէ, բայց անընդհատ էին մեր սրտակցութիւնք թղթով եւ հրատարակութեամբ : Երբ կոչուեցայ յաստիճան վարդապետութեան, դուք արդէն մտած էիք ընդ լծով ամուսնութեան : Տարբեր էր մեր կենցաղական վիճակն, բայց մի էին մեր սրտերն ու նպատակներն :

Սոյն վիճակին մէջ՝ շուրջ տասն տարիներ անցնելէն զկնի՝ **Առաջնորդ** ընտրուեցայ **Զմիւռնիոյ**

վիճակին եւ սկսանք միասին գործել բանիւ եւ գրչաւ, դուք դաստիարակութեան եւ հրապարակագրութեան ասպարիզին մէջ, իսկ ես **Առաջնորդ**ութեան :

Չեմ կարող մոռնալ երբէք, **Սիրելի Մամուրեան**, որ մեր անդուլ գործունէութեան միջոցին՝ բազմիցս պատուասիրուած եմ Չեր ընտանեկան ազնուատիպար յարկին տակ, ո՛չ միայն իբրեւ **Առաջնորդ** այլ պար յարկին տակ, ո՛չ միայն իբրեւ **Առաջնորդ** այլ նաեւ իբրեւ եղբայր : **Ամուսնուս** ին մանաւանդ Չեր խոհեմափայլ **Տիկնոյ** խօսքերն, որ տեղեկանալով թէ՛ միայն մի քոյր ունիմ, յաւեցուց — «**Այս** սուհետեւ երկու քոյր ունիք » : Եւ արդարեւ միշտ իբրեւ եղբայր եւ քոյր ճանաչած եմ **զՉեզ** եւ **Չեր Տիկինն** : Եւ միշտ մանակից եմ Չեր ուրախութեան եւ տրտմութեան :

Երբ տաճարայ բացակայութենէ զկնի վերըստին դարձայ ի **Զմիւռն**, սաստիկ վշտացայ տեսնելով **զՉեզ** յոգնած եւ դաստիարակութեան պաշտօնէ ջաշուած, զի միշտ գնահատելի էր Չեր մասնակցութիւնն տոհմային գործոց նկատմամբ : **Բայց** Չեր գործունէութեան ասպարէզէ՛ բաշուկը հետեւանք չէր ծուլութեան եւ անտարբերութեան (ինչպէս շատերու համար) այլ մշտատեւ աշխատութեան, որ լուսապսակն է Չեր բովանդակ կենաց :

Գիտէք, **Սիրելի Մամուրեան**, որ ինչպէս Չեր նոյնպէս եւ իմ բնաւորութեանս հակառակ է մեր անձին վրայ խօսիլ, բայց Չեր Չօնն առիթ կ'տային՝ Չեր երեսնամեայ բարեկամութեան մի հարեւանցի ստուերագիրն զծել ցոյց տալու համար որ

մեր բարեկամութիւնն, զոր իրաւամբ *ursally*ց անուանած էք, չէ հիմնուած երբէք պաշտօնական ջաղաքավարութեան կամ անձնական շահասիրութեան վրայ, այլ սրտի եւ նպատակի միութեան:

Մենք երկոջեան եւս ծերացած ենք, Սիրելի Մամուրեան, անշուշտ ո՛չ սրտով եւ մտքով եւ ո՛չ յորով տարիներով, այլ շատ զգալով: Մենք կանցնինք, այո՛, անցաւոր աշխարհէս եւ թերեւս ես Չեզմէն առաջ, բայց ինչ որ խօսած ենք, ինչ որ քարոզած ենք ու գրած՝ կ'հաւատամ թէ չեն անցնիր: Եթէ մեր ջանքերն իրազործուած չեն եւ ընդհակառակն տարբեր կերպարան ստացած է Հայրապետութեան խնդիրն, յանցաւորն մենք չենք, այլ սուտ քարոզիչներն եւ սուտ մարգարէները, որոնք ամեն ժամանակ եւ ամեն ազգի մէջ մոլորեցուցած են միամիտ ժողովուրդը:

Ո՛չ ապա շէն Չեր Թարգմանած գրչոյկն իսկ կը վերաբերի սուտ իմաստուններուն եւ անսիրտ համարտակներուն, որոնք իրենց մարդկային տկար զենքերով զինած են հոգւոյ դէմ, անմահութեան դէմ, հաւատոյ, յուսոյ եւ սիրոյ դէմ, առանց որոց ո՛չ այլ ինչ է աշխարհս, եթէ ոչ փոշի արտասուջով խառնուած:

Ես սիրեցի Չեր Թարգմանութիւնն, Սիրելի Մամուրեան, որ մանկան հաւատով կը խորտակէ իմաստունին գոռոզութիւնն եւ սատանային մեքենայութիւնն. թող յոխորտայ իմաստունն եւ ճիծաղի սատանան: Յաղթանակն մանուկինն է: Իմաստունն կ'պարծի, բայց հաւատ եւ յոյս չունի. սատա-

նան կ'ծիծաղի, բայց սէր չունի: Խեղճ են երկոջեան եւս, վասն զի չեն համաչէր սիրոյ Աստուածն, վասն զի այդ սիրոյ գաղտնիքն ծածկուած է ունայնախնդիր ու մեծամիտ իմաստուններէն ու զիտուններէն, եւ յայտնուած է տղաներուն. «Գոհանամ զՔէն, Հայր, աղաղակեց Յիսուս, Տէր երկնի եւ երկրի, զի ծածկեցեր զայս յիմաստնոց եւ ի գիտնոց եւ յայտնեցեր տղայոց: Այո՛, Հայր, այսպէս հաճոյ եղեւ առաջի քո:»

Պատմած եմ Չեզ, Սիրելի Մամուրեան, որ մայրս եղած է ուսուցիչս ընթերցանութեան եւ քանի մը եկեղեցական երգերու, ինչպէս են – *Unwios zuzuz*, *Unwioskawl fawgr* եւ *անուշ հովերն...* եւն.:

Մօրմէս ուսած եմ, որ Աստուծոյ անունը *Սեր* է. «Սէր անուն Յիսուս, սիրով քով ճմիեա. սիրտ իմ քարեղէն», սէրն է որ բարէ սրտերը կը ճմիէ եւ կը կակղացնէ, սէրն է նոյնպէս որ բեկեալ սրտերն կը կազդուրէ եւ կը զօրացնէ:

Որքան գեղեցիկ է Չեր Թարգմանութեան մի նկարագրական պատկերն՝ Մամուկն՝ Յիսուսի գըրկաց մէջ «որ աւելի հարուածներ տուած է Խաչի թշնամիներուն քան թէ Աստուածաբաններու բոլոր պատճառաբանութիւններն»: Ամենէ զօրաւոր թշնամին այդ մանուկն է իր անմեղութեամբ, յորմէ պարտին երկնչիլ անհաւատութեան բանակներն:

Չեր ձօնած գրքոյկին մէջ կան Յիսուսի դէմ ամբարշտաց կողմէն արտասանուած խօսքեր, որոնք բարեպաշտներու սիրտն կը խոցոտեն թերեւս, ինչպէս են *խաբէքայ, պիսակ, մահացած, երագաշես*,

որոյ քարոզածն իբր թէ մաշուած հաւաս է եւ որոյ պատուութիւնն իբր առաւպէշ եւն. : Բայց պէտք է կարեկցիլ ջան թէ զայրանալ աշխարհաց դէմ, ջանի որ հրէից ազգի դպիրներն ու Օրինականներն *Բեհեղ-գեթուդ* անգամ անուանեցին զՅիսուս : Քսնի որ Յիսուս միշտ գայթակղութիւն է հրէամիտներու համար եւ յիմարութիւն հեծանուններու , իսկ փրկելոց համար *Ասուծոյ զորոքիւն եւ Ասուծոյ իմաստքիւն* :

Ոչնչան, Յիսուսի Աստուածութեան հակառակորդ մատենագիրն, չը կարենալով ուրանալ Յիսուսի կատարելութիւններն, Գալիլիայի բնաւայրի բնական գեղեցկութեան վերագրած է Յիսուսի գեղեցիկ նկարագիրն : Խեղճ Ոչնչան, շատ դարեր հորոյլած են Յիսուսի մարմնաւորութենէ ի վեր, շատ շուշաններ ու ծաղիկներ բուսած եւ թաւամած են Գալիլիայի հովիտներուն եւ դաշտերուն մէջ, բայց ուրիշ Գալիլիացի ծնած չէ՝ Յիսուսի նման եւ պիտի չծնի յաւիտեան, զի նա գեղեցիկ է ջան զամենայն որդիս մարդկան, գեղեցիկ մանաւանդ խաչին վրայ. գեղեցիկ՝ որպէս սէր, գեղեցիկ՝ որպէս ճշմարտութիւն, գեղեցիկ՝ որպէս յոյս : Վասն զի Յիսուս ի խաչին՝ է բովանդակ փրկութիւն, բովանդակ սէր, բովանդակ ճշմարտութիւն եւ յոյս : Գեղեցիկ՝ Շնորհաց գեղեցկութեամբ, գեղեցիկ՝ օրինաց գեղեցկութեամբ, վասն զի իր մարդասիրութիւնն է, որ բեւեռած է զինքը ի խաչին եւ այդ խաչն է յորմէ կ'ցոլանան *Orklyf arghuroz-րեան* եւ *Շնորհիք գրորեան* :

Հեծանոսամիտ իմաստունին եւ սատանին անշարժ կերելի Յիսուս ի խաչին եւ անգործ, բայց ո՛չ

ո՛չ. նա կը խօսի կ'ուսուցանէ, կը շրջի, կերթեւեկէ սիրոյ արշայութեան մէջ փառքով ու յաղթանակաւ. այնպէս որ հաւատոյ աջ ունեցողն եւ խաչելոյն գեղեցկութեան զննութեամբ յափշտակուածն այդ անարգուած փայտին առջեւ ծնրադիր՝ կ'աղտոյակէ. « Ինչքան գեղեցիկ են նորա ոտքերն լուներուն վրայ, որ աւետիս կը բերէ, խաղաղութիւն կ'արոգէ բաւութիւն կը հուչակէ եւ փրկութիւն կ'աւետարանէ »

Շատ մի համարիչ գրածս. Սիրելի Մամուրեան, անհուն է խաչի ճառն. ինչպէս անհուն է խաչելոյն սէրը վշտակրութիւնն եւ գթութիւնն. իմաստուն՝ թէ ոչ իմաստուն, գիտուն՝ թէ՛ անգէտ. արդար՝ թէ՛ մեղաւոր, ամենքը պէտք է փարին այդ խաչին ու խաչելոյն յորում ամենայն գանձը իմաստութեան եւ փրկութեան ծածկեալ կան. որո՞ւ ճշմարտապէս կ'ճոխանան եւ կ'մեծանան նոշա միայն, որոնք հեղ են եւ խոնարհ, որոնք քաղց ու ծարաւ կ'զգան Աստուածային սիրոյն եւ հետամուտ են յագենալ եւ զովանալ նոյն սիրով :

Երանի թէ, Սիրելի Մամուրեան Չեր թարգմանութիւնն ամեն ընթերցողներու սրտին մէջ արծարծէր աստուածային սիրոյ քաղցն ու ծարաւն՝ իմաստունի ճարտարամտութիւններն ունայնացնելու եւ սատանի ծիծաղն նշաւակելու :

Չեր սրտակից բարեկամ

25 Փետրվարի, 1900 ամի

ՄԵԼԵ ԱՐՔԵՄՍ ԶՄԻՌՆԻՈՑ

Զփուռիսս



Յօժարածիս եմ լիովին լսելու այս դիտողութիւնը թէ՛ սոյն գրեցիս ո՛չ գրական եւ ո՛չ աստուածաբանական գործ մ'է։ Եթէ ունի այն ուշադրութեան արժանի յատկութիւն մը՝ այս է՝ լիովին անկեղծութիւն մը։ Էս բառական հիմնօրեայ մարդ եմ, հաւատ մը կ'ըստանիմ, հաւատ մը՝ որ ինձ համար իրական է։ Հաւատ մ'որմէ մազի չափ չեմ շեղիր՝ իբրեւ անկեղծ քրիստոնեայ։ Բէն կը յուսամ ու վստահ եմ որ չպիտի ամբաստանուիմ իբրեւ մարդ մ'որ կրօնական անբոյառութեան ոգով իր գաղափարները յառաջ էշած լինի։ Կան մարդիկ որ սոյն գրեցիք կարդալով հաւատոյ դաւանութեան համամիտ պիտի գտնուին, պիտի գտնուին նաեւ շատեր—վասն զի բազմաքանակ թէ՛ ինչ որ ինձ համար իմացական խնայողան չէ՛ կրնայ ուրիշ այսակազմ անձերու համար անչարքելի դժուարութիւն մը երեւիլ—որ անմիջապէս իզնէ պիտի հեռանան։ Այս վերջիններէն ոչ շնորհ կը խնդրեմ եւ ո՛չ անխնայութեան մը երկիրդ կը աածեմ, վասն զի միշտ դիտած եմ, որ առհասարակ պարկեշտ ու անկեղծ հաւատալիքի հանդէպ երկայնամիտ ու համակրելի վարմունք մը կը բռնեն մինչեւ անգամ այն անձերը որ բնաւ տրամադիր չեն այդ հաւատալիքի հաւանութիւն բնծայել։

Ստամբուլ - Թն. - Սի.

1896



Գ. Բ.

ՄԱՆՈՒԿՆ ԻՄԱՍՏՈՒՆՆ

ՈՒ

Ս Ա Տ Ա Ն Ա Ն

9,
2

ԵՐԱԶ տեսայ որ հոյակապ բաղաբի մը պարկայններուն մէջ կը գտնուիմ։

Իտալական երկնից կամարին խորունկ ու մթին կապոյտին ներքեւ՝ անհամար աշտարակներ, զմբեթներ, տաճարներ ու ապարաններ կը շողային սպիտակափայլ զամբանական բարերու նման՝ որ արշալոյսի շողերէն քերքմանաւան մը մէջ կը ճերմկին, իսկ զլուխներու վերեւ կը սաւառնէր հսկայ տաճարի մը խաչապսակ զմբեթը։

Եւ բաղաբին փողոցներուն, պողոտաներուն մէջ տեսայ անհամար բազմութեան մ'աննման գրոհները։ Ամեն ցեղէ ու ազգէ մարդիկ մըջիւններու պէս՝ կը վիտային տուններու և արահետներու մէջ, և երբ բաղաբին սահմանէն անդին ակնարկ մը նետեցի, նշմարեցի որ մղոններով հեռի՝ շրջակայ գաշտերն բոլորովին ծածկուած էին վրաններով ու տաղաւարներով, այնպէս որ



կարծես թէ անհուն հրատարակն ազգերու հանդիսա-
վայրը դարձած էր:

Ապա իմ մօտ դանուող անձի մը դանուալով ըսի.

— Անշուշա, յաւիտենական քաղաքը Հոռոմն է այս:
Եւ նա պատասխանեց. Այո Հոռոմն է:

— Հապա հոն վարն եկեղեցին — հարցուցի — միթէ
Սուրբ Պետրոսի եկեղեցին չէ:

— Երբեմն այդպէս կը կոչուէր — պատասխանեց նա —
բայց հիմակ այլևս այդպէս չկոչուիր:

— Ուրեմն հիմակ ի՞նչ անուն ունի:

— Մի, միակ Աստուծոյ եկեղեցին:

— Պատմէ՛ ինձ կ'աղաչեմ թէ ինչո՞ւ համար այդ
անունը փոխած են, և ի՞նչ կը նշանակէ այս անբոխը,
վանդիկ ես դեռ նորեկ մ'եմ այս քաղաքիս մէջ:

Եւ խօսակիցս երեսոս նայելով հետաքրքրութեամբ
այս պատասխանը տուաւ.

— Ուստի՛ կուզաս, և ի՞նչպէս դեռ անտեղեակ ես
որ Քրիստոսի մարմինը գտած են:

— Ի՞նչպէս կարելի է այդ բանը. բանի որ մենք
գիտենք թէ մեր Փրկիչը Քրիստոս խաչեցաւ ու թաղե-
ցաւ և երրորդ օրը վերստին յարեաւ, ըստ Ս. Գրոց, և
երկինք ամբարձաւ, ուր կը բազմի իր Հօր աջակողմը:

Բայց նա պատասխանեց ինձ խստիւ.

— Իրաւ է որ այն մարդը զոր դու Փրկիչ կ'անուա-

նես, յայտնեց թէ ինք Աստուծոյ համազօր լինելով, մա-
հուան ենթակայ չէր, հետեւապէս երրորդ օրը պիտի
յառնէր: Այս ևս իրաւ է որ, իր մարմինը չգանուելուն
աշակերտները հրատարակեցին թէ յարեաւ նա և ամ-
բարձաւ: Հետեւապէս բոլոր աշխարհ սկսաւ պաշտել
զԱնի, թէև մահկանացուի մը նուիրելով պաշտօն մ'որ
միայն Աստուծոյ կը պատկանի: Աստուած հանդուրձեց
այս կոպտաշատութեան հազար ինն հարիւր տարի, այս
կոպտաշատական շարութեան համար մարդիկն անպատիժ
թողլով և սպասելով որ ժամանակը լրանայ, խաչեցեալ
Նազովրեցւոյն յաւակնոտ ծանր պահանջմունքն արհա-
մարհուի և իր անհուն ոգորմածութիւնն և մարդկային
մեղաց ծանրութիւնը հռչակուին:

Վասնզի՛ պարտիս գիտնալ որ Պաղեստինի մէջ
գտած են՝ քառակոփ շիրմի մը խորն, ուր տարուած էր,
հազար ինն հարիւր տարի առաջ Յովսէփ Արիմէթէոսի
ձեռօք, Այն անձին մարմինն՝ որ կը պնդէր թէ մահն
իր վրայ բնաւ իշխանութիւն, ներգործութիւն չունի:

Եւ ես ըսի. — Եւ միթէ այս պատճառաւ Քրիստոսն
ուրացող մը գանուեցա՞ւ:

Եւ նա պատասխանեց. — Ահա կը տեսնես թէ որ-
քան մարդիկ հոս միասին դումարուած են՝ միթէ կարելի՞
է որ մարդ մը գանոնք համրէ:

Եւ ես պատասխանեցի. — Երկնից աստղերն ու ծա-

վախի առաջը համարելու չափ դժուարին պիտի լինէր:

Ապա նա ըսաւ. — Դու շատ ճշմարիտ կը խօսիս: Ահա այս անդ առաջին անգամ գումարուած կը անսննս ամեն ազգի բրիտանոնայ վեհագետներ իրենց արքունի դարպասներով և խորհրդականներով, իրենց հոգևոր և աշխարհական որեարով: Եւ դիտե՞ս արդեօք թէ ինչու համար գումարուած են:

— Ո՛չ, չգիտեմ, պատասխանեցի:

— Լաւ ուրեմն, այս վայրս հաւաքուած են որպէսզի հանդիսապէս խոստովանին իրենց և իրենց կառավարած ժողովուրդներուն կողմէ, թէ ի՞նչ անօրէնութեամբ մեղանշած են իրենք և իրենց նախնիք երկիրպագելով և ծնրագիր պաշտելով իբրև Աստուած Աստուծոյ, ըոյս ի ըոյսոյ, նոյն ինքն Աստուած և միակ Աստուած այն էակն որ միտէ ու արիւնէ շինուած էր, և՛ մեզ պէս՝ մահուան ենթակայ: Այս՝ հաւաքուած են որ հանդիսապէս հրաժարին իրենց մոլորութենէ: Այս օր՝ միջօրէին՝ այն վարի եկեղեցւոյն մէջ, և աշխարհի ամեն եկեղեցիներուն մէջ՝ ուր Քրիստոս իբրև Աստուած պաշտուած էր, այդ Քրիստոսը պիտի ուրանան և մարդ պիտի հոշակեն: Երբորդութեան և խաչի խորհրդանշանները պիտի կործանին ու ջնջուին, որպէսզի՝ այնուհետև մարդիկ իմանան որ Մի է Աստուած և ոչ Երեք:

Եթէ կը փափաքիս կարող ես ինձ հետ վարը Մայր Եկեղեցին գալ, որ բեզ պիտի ցոյց տամ այն մեծ արարողութիւնն որով դու անձամբ պիտի հաւատաս թէ Յիսուս Նազուրեցին խաբեայ մ'էր: »

Բայց ես պատասխանեցի. — Եթէ այս և ուրիշ բաներ ալ ցոյց տաս ինձ — թէև Թովմասին նման ձեռքերուն և սաքերուն վրայ կը տեսնեմ վերքերը, և իմ մտադ ծակուած կողին վրայ կ'իջեմ, դարձեալ չպիտի հաւատամ որ Յիսուս, իմ Տէրս ու Վարդապետս, խաբեայ մ'էր, վասնզի պիտեմ թէ որու վրայ զրած եմ իմ վստահութիւնս: Ես աւելի հակամէտ եմ հաւատալու թէ ըսած բանդ սատանի հնարներէն մին է՝ որոց գէմ հոգին Սուրբ մեզ զգուշացուց: . . .

Ապա մարդն ըսաւ. — Մանկական միամտութիւն է զգայարանքի վկայութեան չհաւատալը, ինչպէս որ միամտութիւն է բուկինիզ պէս սին ու անհիմն հաւատալով զո՞հ մնալը:

— Եթէ զգայարանքս իբրև գատաւոր բռնէի, պատասխան տուի — պիտի հաւատայի որ արեգակը կ'տեսնեմ այն միջոցին երբ իրօք հորեզոնէն վար է, և երբ դիտեմ թէ անոր ցոլացած նկարն միայն և չէ թէ նոյն ինքն արեգակն է որ կ'տեսնեմ: Եւ բրիտանոնէական հաւատքով զո՞հ լինելը կրնայ մանկամտան լինել ալ ոչ մանկային, վասնզի թէև մանուկը կրնայ անոր մէջ գտնել

ամին ինչ որմէ պէտք ունի, սակայն աշխարհիս ամենէ
խմաստուններն խոստովանած են թէ որքան աւելի
մտածած են անոր վրայ, որքան աւելի մտան ուսման
սիրած են զայն այնքան աւելի հիացման, պաշտաման
և սիրոյ պատճառներ գտած են: Աշխարհիս մեծ հան-
ճարները, Եւրոպիաներն ու Միլիոնները մեր կողմն են
և ոչ ձեր կողմը, և այս պատճառաւ իսկ որ մեծ էին,
այս պատճառաւ որ իմաստունն էին, շէին նկատեր որ
այդպէս էին: Ստոյլ է թէ մերինն ամենէ պարզ հաւատն
է: Եւ այսպէս պարտէր լինիլ, քանի որ հասարակպէս
թէ հարուստին և թէ աղքատին, թէ պատանիին և թէ
ծերին, թէ տկարին և թէ զօրաւորին սրտին կողմ
կ'ընէ, ինչպէս նաև իր անակին մէջ բանւոր կնկան, որ...
երբ վար կ'ընէ առաւօտէն մինչև երեկոն բանած զործն
. . . այնքան շատ յոգնած ու աչերը վատոյժ, չը չի
կրնար ձեռքը զիրք մ'անուղ և ոչ իսկ խորհիլ, ինչպէս
նաև պճնատէր կնկան կամ պարապօրոյ մարդուն՝ չը իր
կեանքն ուսման և գիտութեան նուիրած է: Եթէ այսպէս
չլինէր, և եթէ իր կողման զօրութիւնն անհատին յառ-
ւորական կարողութեան համեմատ լինէր միայն, այն
ատեն մարդկային ազգի կէտն—այն կէտն որ ամէնէ ա-
ւելի կարօտ է Անոր, պիտի մտար առանց օգնութեան և
յուսոյ, որ առատօրէն շնորհուած են Մեծ Մխիթարիչին
կողմէն: Եւ սակայն ըրիստոնէութեան պարզութեան

հակառակ, ես կը հաւատամ որ եթէ Աստուծոյ հետ ա-
մեն բանէրու կեդրոնը գտնուելու կարող լինէինք, պիտի
տեսնէինք որ գերագոյն ու միակ տիրական օրէնքը—
առանցքն որու վրայ կ'ընանայ այս ու միւս բոլոր տիե-
զերաց օրէնքը— փոխադարձ զոհողութեան օրէնքն է,
այն օրէնքն որ տրամադրած է, աշխարհի հիմունքը գեա
ևս չըրուած, թէ Աստուծոյ որդին պիտի կրէ աշխարհի
մեղքերն, այս է անմեղ Քրիստոսը:

Այն ատեն մարդն բաւ հեզնօրէն .— Այն որու
համար կ'ըսես թէ Աստուծոյ որդին է, միայն պիտակ
մ'էր... Մարիամին, սխալմամբ կոյս կոչուածին և իր
սիրողին հիւան Յովսէփին որդին էր:»

— Անտարակոյս զու հարազատ որդի մը չունիս—
պատասխան աուի— որ այդպէս կը խօսիս Անոր վրայ
որ մանկութիւնը ընդ միշտ նուիրագործեց իր երկնա-
յին մանկութեամբ... որ վերստին նուիրագործեց զայն
աւելի վեմ ու աւելի նուիրական նշանակութեամբ երբ
իր Աստուածային մարդեղութեան մասնակ արտաս-
նեց այս բառերն որ այսօր ամեն մարդերու ականջին կը
հնչեն իբրև բազմաբարձր երաժշտութիւն, ինչպէս երբեմն
կը հնչէին Պաղեստինի Մայրերուն ականջին.— Թոյլ
աուէր փոքր մանկանց որ իմ մտա գան և մի' արգիլէք,
վասնզի այսպիսիներու համար է Երկնից Արքայութիւնը:
Այն ատեն ըսաւ մարդը.— Այդ ամենն ինձ հա-

մար աննշան բաներ են, բանի որ ոչ կին ունիմ և ոչ զաւակ:

— Բողորովին կը հաւատամ՝ ըսածիդ — պատասխանեցի — վասնզի իրօք ոչ հայր մը, ոչ մայր մը... իր փոքրիկ զաւակներն երկրի վրայ կամ երկինքը լինին... կարող են առանց յուզման լսել այդ հեշտալուր երաժշտութիւնը: Տեսարանն այն փոքրիկ մանկան որ այնքան լնական, ա՛յնքան վստահ կերպով կը հանգչի սիրապէս մեր Փրկչին՝ գլուխը, իբր իր մօր գրկաց մէջ, և լիուշի սիրով ու վստահութեամբ կը յայտի այն դէմքին որ իրեն դէմքը կ'նայէր երկնային գորովով, երկնային հայրական շողորմութեամբ — թէև իր ականջին չպիտի հնչէին երբէք մանկային շրթերէ ելած հայր հրաշալի անունը... ամեն մանուկները Բրիտանոսի նուիրեց, ինչպէս Բրիտանոսն ամեն մանկան: Այդ պատկերն պիտի մնայ յաւէտ՝ իբրև անբիծ սրբութեան պատկեր մ'որու վրայ մարդկային ականարկն հանդիման լինի — այն սիրանուշ յպիստակութեամբ անսխալութիւնն՝ անմեղ մանկան և անարատ Մարդուն մէջ: Որքան ժամանակ որ մօր մը սրտին մէջ այդ պատկերը դրօշմուած մնայ, նոյնքան ժամանակ մի՛ յուսար երբէք կործանել Բրիտանոսնէութիւնը: Այդ փոքրիկ մանուկը Յիսուսի զրկաց մէջ՝ շատ աւելի մահաբեր հարուածներ տուած է խաչի թշնամիներուն քան թէ ամեն ատուաձարաններուն բոլոր պատճառաբանութիւններն: Ամենէ

զօրաւոր թշնամին այդ մանուկն է որմէ պարտին երկնչիլ անհաւատութեան բանակները:»

Որպէս թէ այս իմ տրտասանած խօսքիս վրայ երկինք « Ամեն » գոռաց, յանկարծ թնդանօթի մ'որոտումն լսելի եղաւ:

— Այս է, ըսաւ խօսակիցս — թափօրին շարժման նշանը — և նոյն պահուն՝ այս մեծ Ժողովին վրայէն ականալուծեան սարսուռ մ'անցաւ, նման անբեկներուն սօսիւնին՝ երբ անձրեւը մտալուտ է:

Շատ հեռուն թրթռուն շշուշ մը լսեցինք ճճիներու հանած հծծիւնին նման՝ ամառնային արեւոտ միջօրէի մը ժամանակ, և այդ շշուշը տարօրէն յուզում մը պատճառեց ինձ, վասնզի գիտէի թէ ահագին հոծ թագմութեան մը ձայնն էր այս: Երբեմն այդ ձայնն կը դադարէր, ինչպէս կը դադրի զանգակներու ղօղանջիւնն՝ երբ հոյլը կը նուագի, ապա աղմուկը նորէն կը բարձրանար՝ նորհաս մականթացութեան մը բզզումին նման, և քիչ քիչ ծովափին վրայ փշրուող կոհակներուն մոնչիւնը կ'ստանար, այնպէս որ կարող էինք լսել փողերու շփնդն որ կը խոսնուէր թմրուկներու միօրինակ դափիւնին և ցնծութեան աղաղակներն որ զանգակներու զանգիւնին պէս կը ծածանէին անհուն բազմութեան վերև:

Եւ ապա՝ յամբաբայլ շարժելով փառայեղ երաժշտական խմբին հետ՝ կը յառաջանար և ի հանդէս կ'եկնէր

գերապանծ թափորը: Իրարու կը հետեւէին մեծամեծներ՝ շքեղ պատմուճաններով և խորհրդականներով շրջապատուած, և կը դիմէին վեհաշուր փառաւորութեամբ դէպի Մայր Եկեղեցի: Եւ երբ թափոր թափորի կը յաջորդէր, այս անթիւ անհամար ամբօխէն ծափահարութեանց այնպիսի գոռում մը բրթաւ, որ երազիս թեւը խզուելով՝ իբր հմայիւք՝ վայրկեանի մը մէջ, այլ հրաշալի ու ահաւոր տեսարանն աչքէս անհետ եղաւ:

Այլ ևս չէի այն փողոցին մէջ ուր բոլոր Հոռոմ՝ կը թնտար սրտտալի աղաղակներով, այլ ծուր գրած էի—ես բերաւոր հանդիսականներէն մին— բնդարձակ Մայր Եկեղեցոյն մէջ: Որոտման նման գոռ ու գոչումը դեռ ևս ականջներուս մէջ կը հնչէր, բայց այնպէս երեւցաւ ինձ՝ այն պահուն՝ թէ այն երգիտնի գոռումն էր, և թիչ թիչ անոր նուազումը լսեցի, մինչև որ մարեցաւ խոր լոռութեան մէջ, երբ յանկարծ մարդու մը ձայնը լսելի եղաւ, մարդ մ'որ յողովուրդն աղօթքի կ'առաջնորդէր:

«Ամենագոր Հայր, Երկնից և երկրի միակ Տէրն ու Աստուածն և համայն մարդկութեան գատաւորը, խոնարհարար կ'աղաչենք քեզ գթութեամբ նայիլ մեզ, յողովրեանդ վրայ, որ Յիսուսի հետեւելով անդիտաբար, մարդու մը նուիրած եղանք պաշտօն մ'որ Աստուծոյդ կ'պատկանի միայն, և այսպէս կոսապաշտական ծանր մեղք մը գործած եղանք քու Աստուածային Վեհափա-

ռութեանդ դէմ, մեղք մ'որ արժանի է քու արդար սրտմտութեանդ և հրեղէն զատապարտութեանդ: Ահա անկեղծօրէն կը զղջանք և խոնարհարար կ'աղերսենք որ մեզ անհուն ողորմասիրութեամբ շնորհես քու ներողութիւնդ և մեզ յաւէտ պահես պահպանես միակ Աստուծոյն հաւատքին մէջ, այն միակ Աստուածն որ յաւէտ կայ ու կը կառայարէ համայն աշխարհն միշտ և յաւիտեան: «Ամէն:»

Այն յաժանակ՝ երբ բոլոր հաւատացեալները ծնրազիր կ'աղօթէին մեծամեծներն մի առ մի ոտք ելան և իրենց արբունի պատմուճանները հանելով ըսկասան ճեմել զլեւիկսր, և խորանին առջև ծուր իջան՝ ամենուն ի տես, որպէսզի բարեխօսեն հանդիսապէս իրենց ժողովրդեան և անձին համար՝ ի բաւութիւն մեղաց, որով յանցապարտ գանուած են ազգ և ազինք: Եւ ասոնք մի բանի վայրկեան երկրպագութեամբ ապաշխարելէն հետ, հանդիսականներն աղօթքի առաջնորդը դարձաւ ծնրազիր յողովրդեան լսաւ:

—Միթէ կը հրաժարի՞ք ընդ միշտ խաբրայէն որ, աշխարհի մեղքը փարատելու պատրուակաւ, անոր վրայ ծանրացուց հազար ինն հարիւր տարուած կոսապաշտութեան մահացու մեղքը:

Եւ յողովուրդներ միտձայն հաւանութեամբ պատասխան տուին:

— Այո՛ կը հրաժարինք այդ անձէն միշտ և յաւիտեանս »

Եւ ապա՛ ծանրաբեռնած լանջի մը մէջ ճնշուած հառաչի մը նման, տաճարին ուռած գմբէթն մթին, յեղակարծ, որոտագին վշտակութեան շեշտ մ'արձակեց . . . Աստուծոյ մը մահուան զօղանջինն, և այս աղաղակին վրայ, տարօրէն անդորրութիւն մ'որ լուծիւն չէր, այլ կերպ մը հեւուք որ՝ բոլոր ամբոխին հեղձակ շնչառութեամբ ու սրտի աղմկայոյզ բարբախումով, ժողովրդեան վրայ ծաւալեցաւ :

Եւ այն սր խորանին առջև կեցած էր՝ առաջ անցաւ և Աստուծոյ սեղանին վրայէն խաչելութեան պատկերն առաւ, պահ մ'ամենուն առջև ցոյց տուաւ բարձրացնելով և ապա զոչեց :

— Քրիստոսի իշխանութեան վախճանը հասաւ. Աստուած մը միայն կ'իշխէ և պաշտելի է յաւիտեան, — և պատկերը գետինն, ստիցը ներքև մարմարեայ յատակին վրայ նետելով փշոր փշոր ըրաւ :

Եւ՛ զուրքը արեւուն՝ թնդանօթը գոռաց և հարիւրաւոր զանգակատուններէ զանգակներն որոտացին Հոռմի մէջ ուրախալի երգերով, որպէսզի ամեն մարդ իմանայ որ վշտաց կրօնը վերջացած և ուրախութեան իշխանութիւնն սկսած է :

ՎԵՐՋ ՆԱԽԱԲԱՆԻՆ

ԵՐԱՋԻՍ մէջ նայեցայ վար՝ աշխարհի վրայ, և տեսայ որ աշխարհ խաւարով պատուած է, միայն լոյս մը կար սր կանգուն խաչէ մը կը շոշար :

Եւ տեսայ որ խաչէն շողացող լոյսն երեւան կ'հանէր նոյն իսկ երկնից երկինքը, այնպէս որ՝ մինչդեռ մարդիկ աշխարհիս մութ ու փշոտ ճամբաներէն կը քալէին, գոնէ կարող լինին ո՛ր և է ժամանակ վեր նայիլ և իրենց գլխուն վերելը տեսնել Աստուծոյ հայրական սիրանուշ զէմքը :

Եւ տեսայ մարդիկ որ ինքնահնար ճանր կանթեղներ խաչին փարոսէն վառելով կը գոչէին. — Եկէք որ տեսնէք գտած լոյսս : Ահա այս է լոյսն :

Ուրիշներ կ'ըսէին. — Տոնէք ինչպէս է լոյսը : Այս է օրուան լոյսը, ինչո՞ւ համար երեւուն կը մնայ սա վարի խաչը, որ իր տխուր ստուերը կ'տարածէ աշխարհի վրայ : Եկէք կործանենք գտին, որպէսզի այլ ևս տխրութիւն չպատէ մեզ յաւիտեանական վիշտերու խորհրդանշանին առջև :

Եւ երբ այսպէս կը խօսէին, յանկարծ մարեցաւ խաչին լոյսն, և անոր հետ մարեցան նաև անոր բոցէն վառուած բոլոր մանր մունր ճրագներն՝ լիակատար մթութեան մէջ թողլով համօրէն բրիտանոնեայ աշխարհը:

Եւ լսեցի Աստուծոյ ձայնը որ կ'ըսէր.— Ահա մարդկային ազգին առեի իմ ունեցած ամենէ թանկագին պարգեւը: Արարածը չկրնար երբէք Արարչին հաւատար լինիլ, և որովհետև մարդ չկրնար Աստուած լինիլ— Աստուած առ մարդն ունեցած անհուն սիրոյն համար ուզեց մարդանալ: Ուստի գերագոյն և ամենասուրբ Էակն, որ իր դահն ունի յաւիտենականութեան մէջ, մարդու սիրոյն համար խոնարհեցաւ, անօգնական մանկիկ մը լինելու, մարդու կեանքն ապրելու, մարդկային վիշտերու հաղորդ լինելու, մարդու մահուամբ մեռնելու, որպէսզի այսուհետև կեանքն իր ամայութենէ և մահն իր արհաւիրքէն մերկանայ, վասնզի Աստուած ոչ միայն մարդու Արարիչն ու դասաւորն եղաւ, այլ և մարդու երկնային բնկերն ու եղբայրը:

Եւ հիմակ, այս վերջին օրերս, պարգեւներու մէջ ամենէ երկնաշնորհն... Արարչին ինքնազոհութիւնն իր արարածին սիրոյն համար... նոյն արարածէն կը մերժուի ու կ'արհամարհուի: Ամենէ նուիրական ու ամենէ հանդիսական խորհուրդները ծաղու առարկաներ կը դառնան մարդկան որ կ'ուրանան— ճիշտ այս պատճա-

ռաւ որ իրենց սիրոյն համար խոնարհեցաւ մարմին աննլու — իր աստուածային զօրութիւնն որ իրեն յատուկ էր, մարդկային ազգին գոյութիւն տալէն առաջ:

Մարդիկ իրենց յարուցեալ և ամբարձեալ Փրկչին վրայ կ'ըսուին իրրև մահացած երազասեսի կամ սնապարծ խաբերայի մը վրայ, հրատարակելով որ Քրիստոնէութիւնն մաշած հաւատ մ'է, երէկի եղելութիւն մը, և Աստուածային մարդուն պատմութիւնը, առասպել մը, միսիայն մանկան մ'ականջներուն արժանի:

Եւ Աստուած նորէն խօսեցաւ այսպէս — Ո՛հ հաւատ ու ամբարիշտ սերունդ, ո՛ր բարւոյն ծայրոզներն ու անիրաւութեան հեղինակներ, միթէ ես արդէն ձեզ հետ չէի՞ երկար ժամանակ: Ամեն օր ձեր դուռը զարնելով չաղաչեցի՞ ձեզ ընդունիլ պարզև մը, որ եթէ ազատօրէն ձեզ շնորհուած չլինէր, ձեր կեանքն արժանապէս անցուցած պիտի լինէիք, զայն շահելու համար: Եւ ամեն օր դուք զիս դուրս վճնակեցիք, վանեցիք զիս ինչպէս որ կը վանէք զող մը, մուրացկան մը ձեր դռնէն դուրս:

Բայց ահա հիմակ նայեցէ՛ք: Այլ ևս ձեզի չսիրտի գամ: Դուք... որոց դրան առջև ինքն Անձամբ Աստուած երկար ժամանակ կեցաւ, ընդունայն մուտ խնդրելով... դուք կենաց դուռը պիտի զարնէք օր մու անուշազիր պիտի մնաք: Զեր յատուկ բերնով պիտի արտասանէք ձեր դատաստանը: Դուք ըսիք որ Քրիստոս չկայ, թէ

այն որ աշխարհի մեղքը տանելու համար եկաւ, և՛ մահուանէ իր փառաւոր յարութեամբն, բոլոր մարդկան յաւիտենական կենսութեան համար, կամ մոլորած էր կամ մոլորիչ մը, որ կ'հանդիսի և հանգչած է, այս հազար ինն հարիւր տարուան շրջանին մէջ՝ իր անձանօթ ու անպատիւ գերեզմանն ի Պաղեստին: Ահա այսպէս խօսեցաք դուք և ձեր յատուկ բառերով պիտի արձակէք ձեր դատապարտութեան վճիռը:

Ես, որ տուի, կարող եմ հա առնել. ես որ շինեցի, կարող եմ արել: Թո՛ղ այդպէս լինի... ձեր ըսածին պէս է... չկայ Գրիստոս:

Եւ երբ Աստուած այսպէս կը խօսէր, այնպէս երեւցաւ ինձ՝ որ նա սրբեց— ինչպէս կը սրբէ մահուակ մը զբաւձի վրայ թերի դուժար մը... ամեն բան որով կ'նշանակուի և նշանակուած է մարդկութեան համար Յիսուսի մեծ անունը:

Պահ մը նշմարեցի դարերու մութ հեռակարին վրայ Երկնային մարդուն վեհաշուք դէմքը: Վարձ՝ իբր զիշերային անդաստանի մը վրայ, որ անհուն մթութեան մէջ կը տարածուէր, շարուած էին կենաց պայքարին մէջ վիրաւորուածներն — այրիացած, որբացած, անօգնական, հիւանդ, հաշմոտ ու մեղապարտ էակները: Եւ տեսայ որ այդ միակ երկնային ու պայծառ դէմքին կողմնէր, աշխարհի լուսոյ կողմնէր, ի որ ամենուն ձեռները

բարձրացած էին — ամենուն աչունքը սեւեռած էին: Տեսայ Գրիստոսն որ վարձ՝ իր տառապող արարածներուն կը նայէր աչքերով սրոցմէ գորովալի ու արգտհասելի սիրոյ արտասուք կը հոսէին. լսեցի իր շրթերէն արձակած բարձր ու աղէկէզ աղաղակն անոնց աղէտից հանդէպ. տեսայ որ իր թեւերը կը տարածէր դէպ անոնց կողմն, ինչպէս մայր մ'որ իր թեւերը կ'կարկառէ իր վշտահար զաւկին — և ապա վշտաց Մարդուն վսեմ ու մենաւոր կերպարանն անհետ եղաւ ընդ միշտ, և անոք, անյոյս, մեղապարտ, տառապալին մարդկութեան վրայ իջաւ խաւարն և յուսահատութիւնը, անզոններու նման որ կ'իջնեն իրենց որսին վրայ:

* * *

Սակայն նորէն տեսայ երազ մ'որու մէջ՝ իբր հայելիի մէջ, այլ և այլ պատկերներ կ'շարժէին:

Ակնարկ մը նեւեցի Գրիստոսագուրկ աշխարհի մը վրայ և տեսայ որ, թէև միեւնոյն արեգակը կը լուսաւորէր երկիրն, թէև միեւնոյն աստղերը կը գեղազարդէին զիշերը, բայց այդ երկրի վրայ բնակող մարդիկ ու կանայք գունաթափ, մտատանջ և ապերջանիկ արարածներ եղած էին: Ոմանք միասին նստած կը ծիծաղէին իբր

անկախոր, բայց զուարթութիւն չկար իրենց ծիծաղին մէջ, վասնզի տրամադին ու շուարած դէմքեր ունէին և մինչև անգամ իրենց ծիծաղելու ժամանակն անձկադէն ակնարկներ կը նետէին չորս դէն, որպէս թէ անասունելի թշնամոյ մը յանկարծահաս յարձակումէն կ'երկնչէին: Եւ տեսայ որ Աւետարանի հացն ու գինին իբրև անկանելի ուտեստ և բուսկի նկատող բողոքարկուններն անկշտութեամբ կ'ուտէին տարբեր խորաններէ եկած կերակուրներ, կամ նոր փիլիսոսփայութեան մը բահանայսպետներու ձեռք պատրաստուած ուտելիք: Անոնք որ կը յայտարարէին թէ բանականութիւնը չէր ներքեր որ հաւատային Աստուծոյ մի անդամ մարդկութեան, անկասկած կ'ընդունէին Մարդու բազմապատիկ վերամարմնաւորումն: Անոնք որ գանկատեցան թէ Գրիտաոնէութեան ուղիղ ու հարթ արահետը շատ դժուարին հետեւելի ճանապարհ մ'է իրենց համար, կամ թէ այդ ճանապարհին վրայ ապահով կտուան մը չկար, նախապնդարման բաւիղներու մէջ մտրելու, կամ անհաստատութեան ապոստամբութեան անապատներու մէջ դեզերելու յօժարամիտ գիտունեցան:

Եւ տեսայ շատեր որ անսպասակ կը թափառէին ընդ առաջ և յետևոյ որպէս թէ բան մը փնտռելու վրայ էին և չէին գտներ: Եւ մերթ րոյ մերթ մէկ կ'եկնէր կ'սկսուար. — « Ահա գտայ զայն », և այլք ամեն

խնայարկութիւն թողնող ինչպէս կ'անարժանոր մտաւ որ մտիկ կ'ընէ: Բայց ամեն անգամ որ մին այսպէս կ'ըկոչէր, անն անդամ վաղողներն իրենց անկը կ'զաննային ունայնաձեռն ու դժգոհ, մինչև որ շատեր զայլընդանկող կոչման միտ կ'ընէ:

Այն ժամանակ ըսի անկից անցնող մարդու մը « Ի՞նչ է քնտրածդ » — Կենաց հանելուկին բանալին կը փնտռեմ » պանտափանեց նա — Ի՞նչու համար ինքզինքը կ'ընդդիմ — Ինչի՞ — այնպիսի բաներու համար որ կարողութենէ դ զեր ի վեր են — Ո՞րքէն որուն ըրածն կեր, ա ըբ, անունացի բ, զաւակներ թեր և ուրախ ըր: Դուք չէք չունիս հանելուկին բանալին գտնել, մինչև այն օրն երբ Մեծ Եւանջիլի հետեւելով դու անձամբ պատի փնտռես. բայց այդ օրը շատ հնուր է տակաւին: Դու շատ տարեց չես, և թիրուս շատ տարիներ ունիս այրելու: « Եւ միտա միջա. բնութայն ինք — յամսն »

Բայց մարդը պատասխանեց. — Մեր ժամանակ անուանածն սերիշ լան չէ, եթէ ոչ արեգակաւ շնորհի մը յաւիտանականութեան անհուն զատարկութեան մէջ ճնտնած, և կեանքն ալ միայն վաղանցողի հիւլէի մը ծրուան թիթուուն է, մինչև ինչ անոր մէջ տեսանիլ չկարձ տան: Ի՞նչ փոյթ է, որքան, շողուն հիւլէին եթէ լայրկեան մը կամ պահիկ մը շատաւի մը կտրելով խանութ Իրաւար անցնի: Եթէ կենաց բանալին ճշդի

կարգալու կ'փափաքիմ՝ պատճառն անձնական երկիւղ մը չէ թէ արգեօք ապագան բարի՞ք թէ չարիք վերապահած է ինձ, ո՛չ, այլ պատճառն այս է որ՝ կին մ'ունիմ՝ զոր կ'սիրեմ, զուակ մը զոր կ'պաշտեմ, և այն մտածունքն թէ օրին մէկն — ո՛ր է օր մը — մահը կրնայ մեզ իրարմէ բաժնել, թերեւս վերստին չտեսնելու պայմանաւ, ահա այդ մտածումը կ'պաշարէ միտքս, կ'համակէ հոգիս և գոյութիւնս դժոխք կ'ղարձնէ:

Արդէն սոսկալի բան մը պիտի լինէր սիրական մը կորուսել, եթէ ստոյգ իսկ լինէր թէ ասա զիրար սիրողներն անդին ալ պիտի սիրուին և միասին պիտի ապրին: Բայց այս բանն անգամ զլացուած է մեզ անտարակոյս, զանդի մահը մարդուս երեսին կ'գոցէ այն դուռն ուսկից փութով առին տարին իր սիրականը:»

Ապա ըսի. — «Դու և սիրածներդ — կենդանի թէ մեռեալ, — գոնէ Աստուծոյ աջին տակն են:»

— Ի՞նչ զիտես Աստուծոյ վրայ — հարցուց մարդը:

Եւ ես պատասխան տուի. — «Այս զիտեմ որ նա մեծ է:»

— Այնքան մեծ որ ոչ իմ և ոչ սիրականներուս հոգը կ'տանի — ըսաւ մարդը դառնապէս: — Ո՞վ եմ ես, որ Աստուած իմ հոգս տանի: Ինչո՞ւ համար ես որ անհամար միլիոններու մէջ լոկ անհատ մ'եմ, Անոր առջև աւելի ծանր կշիռ մ'ունենամ քան տասնիսի մը փո-

րին մէջ ձուի մը, որ իր արարածն է: Եթէ ձուն ձուկ լինի, լաւ է, եթէ ջնջուի կամ կլլուի, դարձեալ լաւ է: Նոյն բանն է նաև մարդու համար: Աստուած արեղակը դրաւ երկինքն որ զանի տարջնէ ցերեկն, և լուսնակն ու աստղունքն որ անոր ընկերանան դիշերը: Աստուած կ'ըօէ անոր. — Ես իմ պաշտօնս կատարեցի և լաւ կատարեցի: Ճանապարհը բաց է քեզի համար: Արդ՝ առաջ անցի՛ր և քեզ համար աշխատէ և արտում կամ ուրախ եղիր, անօթի կամ կուշա, տկար կամ հզօր, բաջտողջ կամ մահամերձ, ամեն ինչ որ պատահի քեզ:»

Այն ժամանակ ըսի. — Լաւ, Այն որ չկրնար սուտ խօսիլ մեզ ըսած է թէ մեր զլխուն մազերն անգամ համրուած են, և թէ ո՛չ իսկ ճնճուել մը վար պիտի ընկնի և Հօր կողմէ պիտի մտցուի:

— Խօսքդ որո՞ւ վրայ է — հարցուց մարդը:

Եւ ես պատասխան տուի. — «Քրիստոսոսի Աստուծոյ վրայ:»

Այն ատեն մարդն ըսաւ արամազիկն:

— Քրիստոս, Քրիստոս չկայ: Տար Աստուած որ զոյութիւն ունենար:

Քրիստոսի վրայ հաւատաւ դադրելէն առաջ չէի կարող ըմբռնել թէ կարելի էր, առանց Անոր միջնորդութեան, աւելին իմանալ Տիեզերքի վեհապետն, քան այն որ հին ատեն գանդառեցաւ, ըսելով:

Կարգը կստանայ զԱստուած փնտրելովս :
 Եթէ Աստուած կըրդիս չբայնէ մարդոց մայրիկ
 չին իմանա թէ ինչ է Աստուած և կամ պատգի կայ
 Աստուած մը : Եթե զի Երեւան զմար զո մցմիկցմ յար
 Երեւան կա կ'հաւատայի թէ Աստուած սերբը անբը
 գինը մայրնամ էր և թէ այս կրկին կրկինգ նախագն
 նեակն էր : Հիմակ չոկ բանս մ'է որսկից խոյր ապա
 ճար չկայ աբ բանս մ'արու մէջ կար գերիներ պատհամ
 կըր Սնծանթ Բանապատհի մը կարթոյ Ի Կ'Յ'Ն փայմս
 է կիկ կրկին գեղեցիկ է կարթուարին անք չի է Եթէ
 ևս կրկին ներկում է, կրբ բաջ գիտեալ Արհուան
 ուկրաւ ձեզը գահնը կարթ է Կ'է Կ' Ժամանակ
 կարթն զինը Իր սիրելիներուն զոկնէ և զինը կամ զա
 նոնը գահալիծել անծանթ Կակապատհի մէջ : Մինչ
 դեռ ևս կ'հաւատայի թէ Աստուած Բարեպատի միջոցաւ
 ինքզինը մայրնամ էր : Երկրի վրայ ամեն հոգի նուի
 բական էր ինձ համար : Միևնոյն երկնային գերդատա
 նին անդամներն էինը Երբ այս ուրիշը էինը Ի Տէր մեր
 կարայս ևս Գրկինը Հիմակ մեկնս գոհակիցներ ենը իբր
 կեր առիմներու առջև նեուամ միասին նոյն կրկեսին
 դէջ : Այն ատեն մեր սերելիներուն կորուսան անդամ
 նուկապատհի կա Գրկ համար : Աստուծոյ ձեանարութիւնն
 էր մեալը : Ատրի հարուածն էր սրով մեզ կ'հրամայուեր
 կանգնիլ իբր Աստուծոյ ասպեաններն, միշտ կազմ ու

պատրաստ մարտեղու համար Անոր ծառայութեան
 (սպասարութեան) մէջ : Բայց հիմակ կոչում ընող
 չկայ մեզ այլ ազնուապետութեան, վասնզի ամեն որ
 ինքնիրեն համար կ'ապրի : Ազնիւ դատի մը համար այլ ևս
 համարուի ասպեաններ չենը, այլ խուճանի մը մէջ սոս
 կականներ որ իրարու դէմ կ'միծին ու կ'կուտին խաղա
 լիկներու համար որ մեր աչքին առջև կ'ատառանին մեր
 քմահաճ տիրոջ ճակատագրին կողմէ :

Երբ կ'հաւատայի թէ նոյն ինքն Աստուած խոնար
 հելով մեր ուրախութեանց և ցաւերուն մասնակից կ'լի
 նէր, մարդկային կեանքն յաւէտ դեղեցիկ և երկնային
 կերպարան մը կ'անուոր : Այն ատեն մեր կոխած եր
 կիրն անգամ նուիրական կ'երեւէր, բանի որ Նա ևս
 կոխած էր այլ հողը, այն ատեն այս մեղէն պատմու
 ճանն՝ զոր ինքն ալ հագած էր, սպիտակ հագուստ մ'էր,
 զոր իր սիրոյն համար պարտաւոր էինը անրիծ պահել
 աշխարհի վրայ : Այն ժամանակն էր որ արուեստ և և
 բաժնութիւն, նկարչութիւն ու քնարերգութիւն, արե
 ւածաղ և արեւամուտ, և երեկոյեան լոյսին ցոլմունքը
 ծովու վրայ կը միանային իբր մի երկնային ներդաշ
 նակութիւն մեզ դէպի Երկնից շափոք մշելու, այն ժա
 մանակ ամեն ծաղիկ դաշտին մէջ, ամեն դէմք ճամբուղ
 վրայ մեզ աւելի վսեմ ու աւելի սուրբ կենաց կ'կոչէին :
 — բայց այժմ մեր կեանքն — բայց ի՞նչ օգուտ ունի մեր

կեանքն եթէ ֆրիստոս անդոյ լինի, եթէ չէ Աստուած
այնպէս ինչպէս ֆրիստոս մեզի յայտնեց։»

Եւ ուրիշ խօսք չլսեցի, վասնզի մարդն անցեր զա-
ցեր էր՝ որպէսզի այլուր փնտոէ կենաց հանելուէին պա-
տասխանը։

* * *

Երազիս մէջ տեսայ նորէն ֆրիստոսազուրկ աշ-
խարհի մը պատկերը։

Կին մը պառկած էր կիսամիտ՝ ձեղնայարկի մը մէջ,
և անոր մօտեցաւ անձ մ'որ շատ իմաստուն էր, ըսելով.

— Դու կոչել տուիր զիս, վասնզի մեռնելէ առաջ
ինձ խօսելիք պիտի ունենաս անշուշտ։ Եթէ կայ ինձ
վերաբերող բան մը, կամ եթէ ունիս խնդիր մ'որու
մասին կրնամ բնդ խորհուրդ մը տալ, խօսէ, խնդրեմ,
և ես պատրաստ եմ մտիկ ընելու։

Եւ կինն ըսաւ.— «Ես աղջիկ մ'էի... Թերեւս քիչ
մը սննպարծ ու խենթուկ, այլ երբէք չար գործելու
տրամադիր... երբ չարիքը հասաւ ինձ։

Այնուհետև չարիք գործեցի, և իմ ուզելովս գործե-
ցի, բայց Աստուած, Որ իմ պատաւորս է, գիտէ թէ
այդ առաջին յիմարութեան մէջ զլորեցայ, հազիւ հազ
գիտնալով թէ ինչ կ'ընէի և միմիայն վատահելով

այն մարդուն որու տուած էի իմ սիրաս։

«Բայց չարիքը ծովուն կ'սմանի և բնաւ չզլծար ոչ
յիմարին և ոչ տգէտին։ Ճիշտ ինչպէս որ ջրային ան-
յունդն իրեն կ'ձգէ ու կ'կլնէ անոր մէջ պատահամբ
ընկնող մանկիկն, մինչդեռ անփնաս կ'կրէ իր ծոցին վը-
րայ քաջ լուղակն, նոյնպէս պարմանին կամ օրիորդն,
որ տգիտօրէն չարիք գործելու կ'յանդգնին, ծովամայր
կ'կսրուին, մինչդեռ ուրիշներ որ զիսմամբ մօլութեան
կ'զիմեն՝ գրնէ կարող են խուսիլ — միմիայն չարուոյն վրայ
իրենց գիտակցութեամբ — իրենց մեղքին արտաբին պա-
տիմէն։ Ես անխոհեմաբար սահեցայ ինկայ մեղքի մէջ,
իբր մանկիկ մ'որ բաց վայրէ մը ծովը կ'զլորի, և իմ մեղքս
ծովամայր մանկան թրջած լաթերուն ծանրածանր բեռին
նման զիս զարուվար բռնց մինչև որ ջրերն ծածկե-
ցին զլուխս։ Ոմանք՝ որսց զուրը զարկի — երբ սկսայ
զօրծ փնտոել որպէսզի իմ և որդւոյս օրապահիկը ճա-
րեմ — խոյս տուին, որպէս թէ ինձ շփուելով պիտի
պղծուէին, և հրամայեցին որ հեռանամ իբր զատար-
կապորտ թափափիկ մը։ Ուրիշներ բարեսրտութեամբ
և զթութեամբ հետս խօսեցան և արամաղիր էին զիս
«Անկեղանոց» մը զրկել, բայց ես անոնց ըսի թէ իմ
խնդրածս գործ էր և չէ թէ ողորմութիւն, և թէ յրազը-
լուխ ու հաւատարիմ սպասուհի մը պիտի գտնեն զիս
եթէ ինձ պաշտօն մը տան։ Բայց այդ մարդիկ իրենց

գլուխն օրօրելով ըսին թէ կ'ցաւին որ տխուր շատ տխուր էր իմ վիճակս : Մին կ'ջանար անբասիր եղնել ըսելով որ կ'վախնար անբարոյութեան քաջալեր լինիլ, ուրիշ մը կ'վարանէր իր օտն մէջ ընդունիլ զիս որպէսզի շանպատուէ արդէն իր ունեցած սպասուորները : Ուրիշներ ալ մտայոյզ «եղբայրներու» և «որդիներու» խօսքն ըրին, և թէպէտ շատեր զթացին վրաս և այլք ինձ դրամ տուին, բայց ամէնը մտայիր էին զիս իրենց գլխէն ձամբել :

«Նոյն պահուն՝ յուսահատութեան» մէջ՝ այնպէս թուեցաւ ինձ որ բոլոր կանայք կամ անսիրտ էին կամ վատ, և ամեն մարդիկ շարասէր, և — քանի որ կորուստս անգարմանելի էր — մտածեցի թէ ի՞նչ օգուտ ունէր յուսահատական պայքար մը շարունակել և թէ՛ յոռն զո՞յն էր արդեօք մոլութեան զգեստն հագնիլ, քան զանէ դուռ դեզերիլ հազիւ ծածկուած երբեմն առաքինութիւն կոչուած ցնցափներով :

«Պիտի չպատմեմ ձեզ սովորական պատմութիւնք : Միայն պիտի փութամ յայտնել՝ որ երբ եպերելի կեանք մը վարելու վրայ էի — անյոյս թէ՛ այս և թէ՛ հանգերձեալ աշխարհի մէջ — փողոցին մէջ զիպուած մը պատահելով ինձ, հիւանդանոց մը տարին զիս, և երբ կը բժշկուէի, զիս խնամող բարի բոլորն շատ կ'խօսէր և սիրովին կ'խօսէր Քրիստոսի վրայ :

«Մեզք աչսպէս կ'վարուին Քրիստոնեաներն, ըսաւ իմարտուն մարդը, ներս խօսքը կտրելով : — Երբ հիւանդ կի՞ն մը կ'դրկուի անոնց որպէսզի մարմնը բուժեն, խկոյն առիթն օգուտ կ'քաղեն որ հիւանդն հրապուրեն նախապաշարման հետեւելու : »

Այն ատեն կի՞նն ըսաւ. — Ուրեմն ի՞նչ է պատճառն որ դուք, Քրիստոսի սերացողներ, յատուկ հիւանդանոց մը չէք շինած որպէսզի ձեր հիւանդները պարմանելու համար հոն զրկէք :

Բայց խնտաուն մարդը լուծիւն պահեց :

Այն ատեն կի՞նն ըսաւ, դառնալով զայրագին դէպի անոր .

— Ի՞նչ ունիք տալու ինձ փոխան հաւատքի զոր իզնէ առիք : Միթէ կա՞յ իմ նմաններուս համար ուրիշ յոյս մը քան Քրիստոսի խաչին տուած յոյսն : Արհամարհանք միայն գտայ ամեն կողմէ, անպատուութեան նշաւակ եղայ, այնպէս որ փողոցի աղայք անգամ — ատ՛ղ, արդէն շարին զիսութեամբ հինցած — մասնանիշ կ'ընէին զիս բաժահական ձայնով, և Մէկի՛ր միայն իմ մօտ եկաւ խօսելու սիրալիր ու անոյշ լեզուով, ոչլունեց փտարանովն՝ այնպիսի սղջունով մ'որ միայն մարդոց կողմէ պատուուած կի՞ններուն կ'շնորհուի : Նա իմ յուսահատութեանս մէջ, եկաւ իմ մօտ և յորդորեց որ յուսամ, Նա եկաւ ինձ՝ անկեալ վիճակիս մէջ՝ որպէսզի իմ

արժանապատուութեանս զգացունը ներշնչէ ինձ :

«Եւ երբ ըսի. — Տէր իմ, շատ ուշ է, բոլոր հոգեւոր մեզք գործեցի և չեմ կրնար այլ ևս սրբուիլ, նա պատասխանեց ինձ. — Մի հաւատար, աղջիկս : Սառանային վարպետութիւնն է այդ, թէև իմ անուամբս կը սորվեցնեն բեզ զոյն : Անշուշտ՝ երբէք չպիտի կարող լինիս վերստին ստանալ թու անմեղութիւնդ, վառնդի անմեղութիւնն (որ ստէպ ազիտութեան հոմանիշ անուն մ'է) ծաղիկ մ'է որ երբ մի անգամ բազուի, բաժակ մ'որ երբ մի անգամ խորակուի, չկրնար նորէն ստանալ միեւնոյն կերպարանը : Բայց անարատութիւնը չէ թէ երկրային այլ երկնային յատկութիւն մ'է : Սպիտակ աստղ մ'է երկնից երեսն — աստղ մ'որ կ'սրբէ ամեն հոգի որ անգողար անոր կ'նայի անձկանօր :

«Այն ասեն ըսի. — Այո՛, Տէր, թէև ամեն ճիգ թափեցի — ո՛հ յուսահատական ճիգ — որպէսզի իմ ինկած սև և հրաժառ անդունդն դուրս ելնեմ, բայց իմ մեղքիս բռն մշտակայ անուր մ'է իմ վզիս շուրջն որ զիս վար, աւելի՛մօթալի վիճ մը գահավիժելու կ'նկրտի :

«Բայց նա պատասխանեց. — Մինչև անգամ հիմակ կը բառնամ թու ուսերուդ բռն իմիննհրուս վրայ : Եւ որպէսզի դու ազատ մնաս մեղքէ, նոյնպէս մեղքիդ հետեւանքէն, կ'կրեմ ու կրած եմ յաւիտենական վեշտի բեռը :

«Եւ ես ըսի. — Այո՛, Տէր իմ : Սակայն կարո՞ղ եմ ջնջել անպիտան : Սև ու ապականած է իմ հոգիս և իբր բորոս ախտագին, այնպէս որ աշխարհի հեղեղներն անգամ չպիտի կարենան սրբել իմ աղաք :

«Բայց նա պատասխան տուաւ.

— «Ինչ չես կարող ջնջել անցեալը, բայց ես կարող եմ և պիտի ջնջեմ, և թէպէտ հոգիդ՝ ըսածիդ չափ՝ սև է, սակայն ես նորալազ ձեան պէս կարող եմ ճերմկեցնել զայն :

«Եւ ես ըսի. — Այո՛, Տէր, բայց ես տկար եմ, աւելի տկար և անկայուն բան ջուրը : Չէ թէ մի անգամ, այլ բիւր անգամ տղմուէն դուրս ելայ և ջանացի, բոլոր ուժովս ջանացի անսայթաք բաշխել : Եւ չէ թէ մէկ այլ բիւր անգամ ինքզինքս գտայ տղմուտին մէջ թաւալուն : Իսկ հիմակ ոչ սիրտ ոչ յոյս սենիմ այս անհաւասար պայքարը շարունակելու : Իմ անցելոյս մէջ բրած մեղքերս, մինչև կենացս վերջն անդու պիտի գործեմ, վառնդի բաջ կ'ճանչեմ ինքզինքս, ուստի և տկարութիւնս, հետեւապէս փորձութեան դէմ՝ դնելու անկարողութիւնս :

«Եւ նա պատասխանեց. — Թէպէտ բիւրապատիկ եղած են զայթուձնեիդ, բայց եթէ փափաք ունենաս վերականգնիլ ամեն անկուսէ ետք, գիացիր որ իմ սրտիս մէջ բեզ համար պիտի տածեմ մասնաւոր գորով մը, և եթէ դու ինձ դառնաս միայն ըսելով. «Տէր իմ, իմ

մեղքս քեզի գիտեմ, ուրիշ պէտքերի կ'ընենք մեզ-
 քի կ'իմանանք. անկարողութեամբ ունեւին օրդէ՛ն ինձ,
 վառնդի ինքնին անօգնական եմ, այն ժամանակ յիշեր
 ցերեկ բու մտադպիտի չմիտեմ այն ժամանակ բնզ Գեա
 և բեզի համար պիտի մաքանիմ, մինչև որ իմ զօրու
 թեանքս կուտայ, գործունս մ'ընելու որ անելու զարմիս
 այժմ պիտեմ շարիքի և անուց կէտ, յանգիստի կանգ
 նելու յաջողութեամբ սխ մամէ բայագոս ոմ սխայուս :

Այն ատեն իմաստուն մարդն ըսաւ. — Եւ միթէ անց
 անեն խօսքերուն հանրապագիքս : — Կոց սմ սխ :

11 Եւ կիտը միանա՞նք անուց : — Այո, համապայցի
 ք ճաստի պիտեմ սխիտեմք զոմեր ենու ընուս դաւազ
 բայց անյո կ'մկնն ինչ զերբերուն թիւն ունի ինձ հնուէր
 : սուս չիմանի պիտի իմանաք պիտեմ իմանեց զիտը
 ք : Այո անեն ըսածներս արտին երկուսն իրանս հեւ
 յատի և այն ժամանակէն հետեւ հրովն շուն տառի քո հր
 կենցաղիդ Գեա ևն Կիտ գաւակս արտիմանս ինքնու
 ատիմանին ի հանանքս բայց զիտը շանգէր մ'անուց
 պաշտօնի վր գտայ և յանքայ զիտեմ զիտը շանց
 յետը բոսելի և հեւնել Ստիտի տրաւայնքան հրաշալի
 բաներ քրտեմ երկուսն իմանաք քո յոման զիտը սմ ճայ
 ոյ Բայց քեզեպիս միմանն կէտ քիտը միտը միտը
 թեան մը հանդիտեցայի Այն ատեն իտուս սխիտը հեւ
 մար անեն Գեա քիտը շանգէր քիտը տրաւ մը ըսաւ քիտը

շատ կ'սիրէ զիս, և զազուց կ'իմտուէ զիս որ իր կիտն ընէ :
 Եա ըսաւ ինձ թէ երբ զիս նորէն գտնելու յոյսը կարեք
 է, ուրիշ կիտ մ'է առեր. բայց այդ միտն անուանական,
 ապօրինաւոր կիտն էր : Եա ըսաւ որ եթէ հաւանիմ հե-
 տը զնալ իր զակին հեա, զասնդի ուրիշ գաւակ չունէր
 — անոր ապագան պիտի հոգար, մեր վրայ պիտի հսկեր
 և մեզ համար պիտի աշխատեր մինչև կենացը վերջը :

— Եւ դու ինչ ըրիր — հարցուց իմաստուն մարդը :

— Գլեւն ճամբեցի, ըսելով սր իր առաջարկին
 վրայ մտածելու համար ժամանակ կուզեմ : Եւ երբ այդ
 մարդը հեապցաւ զնաց, տունս թողուցի և իմ վրաքրիկ
 զակիս հեա փախայ այնպիսի տեղ մը որ չէր կրնար
 զիս գտնել : »

— Ինչու համար — հարցուց իմաստունը : »

— Վասնզի կ'սիրէի զանկէ ինչպէս որ միտը կ'իմնէր
 — Աստուած մեզը չհամարէ — երբեմն կ'ընի իրաւայն մար
 դը զսր ատեկու շատ պատմական իրաւանք — Ինչու կ'իմնէր
 կանցաղին : Բայց որքան որ խոր տրաւ այն փորձի թեանէ
 որու զեմանկու զսաահալ ինչքով գտնարի, ինչու հար
 սերպս զիտը ցերեկ անոր հազար կ'ըսար պայտաւ
 ճան որ սխայ զարշիլ այն արեգակի լոյսէն որ ինչուս
 զրէր աշխարհի մարտի և կ'իտայնէ թագի ուղի կիտը,
 և չեթե իմ զՏիտը, Կիտայնի հրապանին զիտը գործեալ
 կ'իտիլը զիտը քիտը զիտը զիտը զիտը զիտը զիտը

պիտի տայի և իմ սիրած մարդու մօտ պիտի վազէի :
 «Եւ կենացս այս ծանր տագնապի պահուն էր, երբ
 աշխարհ վեր ի վայր կ'ընէր ինձ, երբ ամէնէ աւելի
 դրսէն օգնութեան և զօրութեան կարօտ էի, ձեռքս
 տուին ձեր գիրքն, որու մէջ կ'ընես ջնջել մարդկային
 հաւատը Փրկչին վրայ: Իմ սիրտս կ'ըսէր ինձ որ
 սուտ էր այդ գրքին վարդապետութիւնը, միայն հեշտ
 է հաւատալ այն բանին որու հաւատալ կ'փափաքէիք,
 և այնպէս դարձաւ խնդիրն որ ինքզինքս համոզելու
 փորձեցի թէ ձեր փաստերն անհերքելի են, 'նոյնպէս
 համոզուելու թէ խախտած է հաւատս, և թէ բանի որ
 այլ ևս չէի հաւատար Քրիստոսի, պէտք չէի զգար նաև
 հեռելի Անոր պատուէրներուն :

«Ահա այսպէս, մենք կանայք ու մարդիկ, մեր խղ-
 ճին հետ կ'ըսողանք, յայտարարելով որ մեր կեանքն
 մեր հաւատքին հեռեանքն է, մինչդեռ ստէպ մեր հա-
 շատքն է մեր կեանքին արդիւնք :

«Աւելորդ է շարունակել, այսչափ միայն պիտի
 ըսեմ թէ գործելիք մեղքէս ազատ մնացի անոր մա-
 հուամբն, անոր որու սիրոյն համար վերստին պիտի
 մեղանչէիր :

«Քայց իր խիղճը նենգող մարդն ու կինն սոսկալի
 գատաստանի մը պիտի ենթարկի: Իմ սրտիս մէջ
 խղիւղած էի Աստուծոյ ձայնն, ինչպէս կին մը կ'ըսող

մանկան լացն իր կոկորդին մէջ, այն մանկան որու
 ձայնը եթէ լսուէր իր անպատուութիւնը երեսան պիտի
 եխէր: Եւ հիմակ թէև նորէն հաւատալու փափաք ու-
 նիմ, բայց չեմ կարող, վասնզի մեռած է սիրտս, մե-
 ած, և ձեզ կոչեցի, ձեզ՝ որ այնքան խմաստուն էք,
 հարցնելու համար թէ ի՞նչ ունիք տալ ինձ — կիսամեռ
 կնկան մը — իմ կորուսած հաւատքիս փոխարէն :»

Քայց խմաստուն մարդը լուս ու մունջ մնաց, և երբ
 նորէն աչքս վերցուցի որ նայիմ, նա մեկնեւ էր, փակ
 կինն մեռած :

* * *

Անգամ մ'իս, երազիս մէջ տեսայ իբր հայելիի մը
 մէջ, Քրիստոսազուրկ աշխարհի մը պատկերը :

Չգոր մարդ մ'որու դէմքին այլայլութիւնը ահուկի
 երեսոյթ մ'ունէր, անգոր անձկութեան մէջ կ'գտնուէր իր
 միածին որդւոյն մահուան հոնդիւնները զլսիկոր դիտե-
 լով: Փոքրիկ մանկիկն՝ որ սուլոր էր՝ երբ հայրը
 անսնէր խնդութենէ ցատկրտել, այդ մանկիկը, զոր ինք
 հայրն շատ անգամ իր բազուկներուն մէջ առնելով
 (ա՛հ, և որքան գորովագին) կ'օրօրէր, կամ ծրարի մը
 պէս թեւերուն մէջ կ'կրէր, այդ մանկիկն՝ գոր հայր ու

մայր իբրև նորարոյս վարդ ողջուններ էին պարտէզին մէջ, այժմ շնչասպառ թոշնիկի մը թաթիկներուն պէս, իր տոտիկներ վեր հաւրած պառկած էր:

Պսաղուն գանդուրներն, նրբաթել մետաքսի պէս սոկեպոյն, աղուամազի պէս նրբին ու փափուկ, մա- հուան ցօղերով տամուկ և դունատ էին: Եւ այդ Հէք կարկամ ու վշտահար փոքրիկ դէմքն քանի քանի՝ անգամ իր դէմքին վրայ հանգչած էր: Ա՛հ, ի՛նչ սև ըստ- ուներն պատեր էին մանկան աչուկներուն բալորն, ար- չուկներ որ երբեմն իր աչերուն մէջ նայեր էին, որպէս թէ հոգւոյն խորը թափանցել կուզէին, ջրհորի մը եզրը կանգուն — որպէս թէ այդ փոքրիկ մանկիկն Աստուծոյ պահակն լինէր, Անմեղին Արքայութեան դոները պահ- պանելու կարգուած: Քանի քանի՝ անգամ այդ աչուկ- ներուն հրաւերին հանդէպ — կեցիր ու պատասխա- տուր — և այս հարցման — Ես այսպէս եմ, հիմակ ըսէ թէ դու ի՛նչ ես — իր յատուկ աչերը վար խոնարհած էին:

Եւ հիմակ նա պարտաւոր է մանկիկին մօտ կենալ անգոր, ապիկար ձեռօք, մինչդեռ անտեսանելի թճնամ- տոյ մը մատունքը, վայրկեան առ վայրկեան կ'ըսողէին այն փոքրիկ կսկորդէն կենաց շունչը:

Մեռա՛ւ փոքրիկ աղջիկը... նա անդառակ... այդ մանկան կեանքն որու ազատումին համար, յօժարա-

կամ պիտի զոհէր իրենն, իր վախճանը գտաւ: Փոքրիկ հոգին, որ աւելի սիրելի էր իրեն, քան իր հոգւոյն ան- մահութեան յոյսը, թուա գնաց: Եւ երբ իր ըրած կո- բուտին ահուկի իրականութիւնը կ'ծանրանայ սրտին վրայ, պահ մը կ'վերածնի մանկութեան հին հաւատքը՝ և ծոներ իջնելով հայրական վշտաբեկ սիրտը կ'աղօթէ բարձրաձայն իր դառնաղէտ անձկութեան մէջ:

«Տէր իմ Յիսուս, փոքր մանուկներու սիրողն, ա՛ր- դու իմ պզտիկ աղջիկս: Ամեն ինչ լաւ է եթէ նէ բեզ հետ է: Պահէ, Տէր իմ ողորմած, իմ զսարիկս, մինչև որ ներս համար բու մօտդ դամ:»

Եւ այն ժամանակ միտքը կուզայ որ չկայ Յիսուս, և թերևս չկայ Աստուած անգամ, և թէ այլ ևս չգիտէ որ ինչ եղաւ այն փոքրիկ կեանքը, որ իր էութիւնը կը պարտաւորէր իր կենաց, ինչպէս չգիտեր թէ ինչ կ'լինի պղպջակն որ փրփրուն ալեակին հետ կ'պայթի:

Եւ այն պահն յուսահատութիւնը զինք կ'զրարէ:

*
* * *

Բայց տեսայ երկինքն վիշտերու մարդուն Երկնային դէմքը: և ահա, իր ծոցին վրայ կ'հանգչէր փոքրիկ մանկիկը:

Եւ արտասուելի աչերով վարը անդառակ հօր վը-
րայ նայելով, Քրիստոս աղաղակեց, ինչպէս երբեմն Պա-
ղեսաինի զաշտին մէջ պտտած օրերը.

«Ո՛ր իմ ժողովուրդս, իմ ժողովուրդս զոր իմ
սրտիս վրայ կրած եմ, ինչպէս մայր մը կ'կրէ ծոցին
մէջ իր անծին մանկիկն, ո՛վ եղբայր, ո՛վ քոյր, որոյ
աղէտից հանդէպ այս հոգիս շատ աւելի սոսկալի ա-
ղաղակ մ'արձակած է քան ձերինն՝ ձեր կորուսած սի-
րական անձերուն հանդէպ։»

«Քանի՛ քանի՛ անգամ քեզ մխիթարելու յօժմ
բամիս էի, քանի՛ քանի՛ անգամ քեզ սրտիս վրայ պիտի
ամփոփէի, ինչպէս այժմ կ'ամփոփեմ այս փոքրիկ էակն
— և դու մերժեցիր։»

«Սակախ դու որքան որ իմ Խաչս շուղեցիր կրեղ,
ես կարող եմ և կ'ուզեմ կրեղ բուեկդ, մինչև իսկ քու
մեղացի բեռը բառնալով։»

«Եւ թէպէտ դու թողիր և սրապար զիս լիովին,
ասկախ ես չպիտի լքանեմ քեզ յաւիտեան։»

* * *

Եւ երկրիս վրայ իմաստուն մարդիկ նստած կ'ըզգ-
տէին մտածելով թէ որքա՞ն իմաստուն էին, և թէ ի՞նչ

րենց իմաստութեամբ կործանած էին ընդ միշտ վշտա-
կրութեան կրօնը։

* * *

Եւ խաւարի արքայութեան մէջ Սատանն նստած
առանձին կ'յպաէր նոյնպէս անոնց, վասնզի գիտէր թէ
որ շատ իմաստուն էր, գիտէր նաև շատ մանր մանուկ-
ներ քան ինքն ու անոնք աւելի իմաստուն էին։

ՎԵՐՋ


Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.

272

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.





ԳԻՆ 2 ՂՐՈՒՆ



Նշարտ յլիւհ ԶՆԿ Է՝ Նոմրձւի Ե Ե Նիսան
131 Գարիչլո Ղխճիւի Ե ղիւնիճըր

« Ազգային գրադարան



NL0169569

